

ԸՆԴՈՒՆՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի  
խորհրդի 2012 թվականի հուլիսի 20-ի  
թիվ 58 որոշմամբ



**ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ  
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

---

**ՄՄ ՏԿ 029/2012**

**Սննդային հավելումների, բուրավետիչների եւ տեխնոլոգիական օժանդակ  
միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան .....	6
Հոդված 1. Կիրառության ոլորտը .....	7
Հոդված 2. Ընդունման նպատակները .....	7
Հոդված 3. Տեխնիկական կանոնակարգման օբյեկտները .....	7
Հոդված 4. Սահմանումները .....	8
Հոդված 5. Շուկայում շրջանառության կանոնները .....	15
Հոդված 6. Նույնականացման կանոնները .....	16
Հոդված 7. Սննդամթերքի արտադրության ժամանակ սննդային հավելումներին, բուրավետիչներին, տեխնոլոգիական օժանդակ միջոցներին, ինչպես նաև դրանց կիրառմանը ներկայացվող անվտանգության պահանջները .....	16
Հոդված 8. Սննդային հավելումների, բուրավետիչների եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների արտադրության (պատրաստման), պահպանման, փոխադրման (տրանսպորտային փոխադրման), իրացման եւ օգտահանման գործընթացներին ներկայացվող պահանջները .....	26
Հոդված 9. Սննդային հավելումների, բուրավետիչների, տեխնոլոգիական օժանդակ միջոցների մականշվածքին ներկայացվող պահանջները	28
Հոդված 10. Համապատասխանության գնահատումը (հավաստումը) .....	30
Հոդված 11. Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշումը ...	33
Հոդված 12. Երաշխիքային վերապահումը .....	34
Հավելված 1. Բուրավետիչների անվտանգությանը ներկայացվող պահանջներ	35

Հավելված 2.	Մենդամթերքի արտադրության մեջ կիրառվող թույլատրելի սննդային հավելումների ցանկը .....	37
Հավելված 3.	Պառկապնդելիության դեմ (հակագնդիկացնող) ազդանյութերի կիրառման հիգիենիկ նորմատիվները .....	74
Հավելված 4.	Հակաօքսիդիչների կիրառման հիգիենիկ նորմատիվները .....	78
Հավելված 5.	Այլորի մշակման համար օգտագործվող նյութերի կիրառման հիգիենիկ նորմատիվներ .....	89
Հավելված 6.	Ջնարակիչների կիրառման հիգիենիկ նորմատիվներ.....	93
Հավելված 7.	Թթուների եւ թթվայնության կարգավորիչների կիրառման հիգիենիկ նորմատիվներ .....	97
Հավելված 8.	Կոնսերվանտների կիրառման հիգիենիկ նորմատիվներ .....	103
Հավելված 9.	Մենդամթերք, որի արտադրության ժամանակ ներկանյութերի օգտագործումը չի թույլատրվում.....	128
Հավելված 10.	Մենդամթերք, որի արտադրության ժամանակ թույլատրվում են որոշակի ներկանյութեր .....	131
Հավելված 11.	Ներկանյութերի կիրառման հիգիենիկ կանոնակարգերը .....	137
Հավելված 12.	Կրիչների կիրառման հիգիենիկ նորմատիվներ.....	144
Հավելված 13.	Քաղցրացուցիչների կիրառման հիգիենիկ նորմատիվներ.....	154
Հավելված 14.	Պրոպելենտների եւ փաթեթավորման գազերի կիրառման հիգիենիկ նորմատիվները .....	188
Հավելված 15.	Կայունացուցիչների, էմուլգատորների, լցանյութերի եւ թանձրացուցիչների կիրառման հիգիենիկ նորմատիվները .....	189
Հավելված 16.	Համի եւ բույրի ուժեղացուցիչների կիրառման հիգիենիկ նորմատիվներ .....	218

Հավելված 17. Գույնի կայունացուցիչների կիրառման հիգիենիկ նորմատիվներ .....	222
Հավելված 18. Մենդամթերք, որի համար սահմանված է ինչպես «ՏՓ-ի համաձայն» օգտագործվող սննդային հավելումների ցանկ, այնպես էլ դրանց կիրառման թույլատրելի մակարդակներ .....	224
Հավելված 19. Մսնդային բուրավետիչների արտադրության մեջ կիրառման համար թույլատրված համաբուրավետիչ քիմիական նյութերի ցանկ.....	237
Հավելված 20. Բուսական հումքի եւ բուսական հումքից <sup>1</sup> բուրավետիչների հաշվին կենսաբանական ակտիվ նյութերի պարունակության թույլատրելի մակարդակները սննդամթերքում .....	423
Հավելված 21. Պարզեցնող, զտող նյութերի, ֆլոկուլյանտների եւ սորբենտների կիրառման հիգիենիկ նորմատիվներ .....	427
Հավելված 22. Կատալիզատորների կիրառման հիգիենիկ նորմատիվներ.....	433
Հավելված 23. Լուծամզվածքային եւ տեխնոլոգիական լուծիչների կիրառման հիգիենիկ նորմատիվներ .....	435
Հավելված 24. Խմորիչների համար սննդարար նյութերի (լրացասման) կիրառմանը ներկայացվող հիգիենիկ նորմատիվներ <sup>1</sup> .....	439
Հավելված 25. Այլ տեխնոլոգիական գործառույթներով օժանդակ միջոցների կիրառման հիգիենիկ նորմատիվները .....	441
Հավելված 26. Մսնդամթերքի արտադրության ն մեջ կիրառման համար թույլատրված ֆերմենտային պատրաստուկներ .....	448
Հավելված 27. Մսնդամթերքի արտադրության մեջ կիրառման համար թույլատրված օժանդակ միջոցներ (նյութեր եւ պինդ կրողներ) <sup>1</sup> ֆերմենտային պատրաստուկների իմոբիլիզացիայի համար.....	458

Հավելված 28. Սննդային հավելումների անվտանգությանը ներկայացվող պահանջները եւ մաքրության չափորոշիչները .....	460
Հավելված 29. Վաղ տարիքի երեխաների համար նախատեսված մանկական սննդի սննդամթերքի մեջ սննդային հավելումների կիրառման հիգիենիկ նորմատիվներ .....	551

## ՆԱԽԱԲԱՆ

1. «Սննդային հավելումների, բուրավետիչների եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (այսուհետ՝ Տեխնիկական կանոնակարգ) մշակվել է «Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում տեխնիկական կանոնակարգման միասնական սկզբունքների ու կանոնների մասին» 2010 թվականի նոյեմբերի 18-ի համաձայնագրին համապատասխան:

2. Սույն Տեխնիկական կանոնակարգը մշակվել է Մաքսային միության միասնական մաքսային տարածքում սննդային հավելումներին, բուրավետիչներին եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցներին ու սննդամթերքում դրանց պարունակությանը ներկայացվող՝ կիրառման եւ կատարման համար պարտադիր միասնական պահանջներ սահմանելու, Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվող սննդային հավելումների, բուրավետիչների եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների ազատ տեղափոխումն ապահովելու նպատակով:

3. Սննդային հավելումների, բուրավետիչների եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների պարունակությանն ու կիրառմանը ներկայացվող՝ Մաքսային միության այլ տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջները չեն կարող պարունակել սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին հակասող պահանջներ:

4. Եթե սննդային հավելումների, բուրավետիչների եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների վերաբերյալ ընդունվել են սննդային հավելումներին, բուրավետիչներին եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցներին ներկայացվող պահանջներ սահմանող՝ Մաքսային միության այլ տեխնիկական կանոնակարգեր, ապա սննդային հավելումները, բուրավետիչները եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցները նաեւ պետք է համապատասխանեն Մաքսային միության այդ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա:

### **Հոդված 1. ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ**

1. Սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանվում են՝
  - 1) տեխնիկական կանոնակարգման օբյեկտները.
  - 2) տեխնիկական կանոնակարգման օբյեկտների անվտանգությանը ներկայացվող պահանջները.
  - 3) տեխնիկական կանոնակարգման օբյեկտների նույնականացման կանոնները.
  - 4) տեխնիկական կանոնակարգման օբյեկտների՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության գնահատման (հավաստման) ձեւերը եւ ընթացակարգերը:

### **Հոդված 2. ԸՆԴՈՒՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

1. Սույն Տեխնիկական կանոնակարգի ընդունման նպատակներն են՝
  - 1) մարդու կյանքի եւ առողջության պաշտպանությունը.
  - 2) ձեռք բերողներին (սպառողներին) մոլորության մեջ գցող գործողությունների կանխումը.
  - 3) շրջակա միջավայրի պաշտպանությունը:

### **Հոդված 3. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ**

1. Սույն Տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կանոնակարգման օբյեկտներն են Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվող եւ շրջանառության մեջ գտնվող՝
  - 1) սննդային հավելումները, համալիր սննդային հավելումները.
  - 2) բուրավետիչները.

3) տեխնոլոգիական օժանդակ միջոցները.

4) սննդամթերքը՝ դրանում սննդային հավելումների, բուրավետիչներից ստացված կենսաբանական ակտիվ նյութերի, տեխնոլոգիական օժանդակ միջոցների մնացորդային քանակների պարունակության մասով.

5) սննդային հավելումների, բուրավետիչների եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների արտադրության, պահպանման, փոխադրման, իրացման եւ օգտահանման (ուտիլիզացման) գործընթացները:

2. Սույն Տեխնիկական կանոնակարգը չի տարածվում քաղաքացիների կողմից տնային պայմաններում եւ (կամ) անձնական օժանդակ տնտեսություններում իրականացվող՝ միայն անձնական սպառման համար նախատեսված եւ Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվելու համար չնախատեսված սննդային հավելումների, բուրավետիչների եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների պատրաստման, պահպանման, փոխադրման, իրացման, օգտահանման եւ կիրառման գործընթացների վրա:

#### **Հոդված 4. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ**

Սույն Տեխնիկական կանոնակարգի կիրառման նպատակով օգտագործվում են «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված հասկացությունները, ինչպես նաեւ հետեւյալ եզրույթներն ու սահմանումները՝

**սննդային բուրավետիչ (բուրավետիչ)**՝ մարդու կողմից անմիջապես սննդի մեջ չօգտագործվող համաբուրավետիչ նյութ կամ համաբուրավետիչ պատրաստուկ, կամ ջերմային տեխնոլոգիական բուրավետիչ կամ ապխտման բուրավետիչ, կամ բուրավետիչների նախորդողներ կամ դրանց խառնուրդը (համաբուրավետիչ մասը), որոնք նախատեսված են սննդամթերքին բույր եւ (կամ) համ հաղորդելու համար (բացառությամբ քաղցր, թթու եւ աղի համի)՝ այլ բաղադրիչների ավելացմամբ կամ առանց դրանց ավելացման.



**ապխտման բուրավետիչ՝** ծխի խտուցքների չափազատման եւ մաքրման ճանապարհով ավանդական ապխտման ժամանակ կիրառվող ծխերից անջատված նյութերի խառնուրդ.

**ջերմային տեխնոլոգիական բուրավետիչ՝** նյութերի խառնուրդ, որն ստացվում է սննդային կամ ոչ սննդային այնպիսի բաղադրիչների տաքացման արդյունքում, որոնցից մեկը պետք է լինի ամինամիացություն, իսկ մյուսը՝ վերականգնվող շաքար, ջերմամշակման հետեւյալ պայմաններում՝ ջերմաստիճանը՝ 180 °C-ից ոչ բարձր, ջերմամշակման տեւողությունը՝ 15 րոպե՝ 180 °C-ի դեպքում, ավելի ցածր ջերմաստիճաններ օգտագործելու դեպքում ժամանակի համապատասխան ավելացմամբ՝ յուրաքանչյուր 10 °C-ով ջերմաստիճանի նվազման դեպքում տաքացման ժամանակի կրկնապատկմամբ, սակայն 12 ժամից ոչ ավելի. pH-ի մեծությունը պրոցեսի ժամանակ չպետք է գերազանցի 8,0-ը.

**հակաօքսիդիչ՝** սննդային հավելում, որը նախատեսված է օքսիդացման պրոցեսի դանդաղեցման եւ սննդամթերքի (սննդային հումքի) պիտանիության ժամկետների ավելացման համար.

**պառկապնդելիության դեմ ազդանյութ (հակագնդիկացնող)**՝ սննդային հավելում, որը նախատեսված է փոշենման եւ մանրաբյուրեղային սննդամթերքի մասնիկների՝ իրար կաշեւը (գնդիկացումը) կանխելու եւ դրա սորունությունը պահպանելու համար.

**համաբուրավետիչ նյութ՝** բուրավետիչի հատկություններով, քիմիական կազմության առումով սահմանված (քիմիական կազմությամբ առանձին) նյութ, որն ունի բնորոշ բույր եւ (կամ) համ (բացառությամբ քաղցր, թթու եւ աղի համի).

**բնական համաբուրավետիչ նյութ՝** բուսական, մանրէային կամ կենդանական ծագման հումքից, այդ թվում՝ սննդամթերքի արտադրության ավանդական եղանակներով վերամշակված հումքից ֆիզիկական, ֆերմենտային կամ մանրէաբանական պրոցեսների միջոցով անջատված համաբուրավետիչ նյութ.

**ալյուրի մշակման համար նյութ՝** սննդային հավելում (բացի էմուլգատորներից), որը նախատեսված է ալյուրի (խմորի) հացագործական որակների կամ գույնի բարելավման համար.

**խոնավություն պահպանող ազդանյութ (խոնավություն պահպանող նյութ)**՝ սննդային հավելում, որը նախատեսված է խոնավությունը պահպանելու եւ սննդամթերքը չորացումից պաշտպանելու համար.

**ջնարակիչ՝** սննդային հավելում, որը նախատեսված է սննդամթերքի մակերեսին քսելու համար՝ դրան փայլ հաղորդելու եւ (կամ) պաշտպանիչ շերտ ստեղծելու նպատակով.

**դոնդողացնող ազդանյութ՝** սննդային հավելում, որը նախատեսված է սննդամթերքի դոնդողանման կազմություն ստանալու համար.

**թանձրացուցիչ՝** սննդային հավելում, որը նախատեսված է սննդամթերքի մածուցիկությունը բարձրացնելու համար.

**կատալիզատոր՝** տեխնոլոգիական օժանդակ միջոց, որը նախատեսված է քիմիական ռեակցիաներն արագացնելու համար.

**թթու՝** սննդային հավելում, որը նախատեսված է սննդամթերքի թթվայնությունը բարձրացնելու եւ (կամ) դրան թթու համ հաղորդելու համար.

**կոնսերվանտ՝** սննդային հավելում, որը նախատեսված է սննդամթերքի պիտանիության ժամկետների երկարաձգման (ավելացման) համար՝ մանրէական փչացումից եւ (կամ) ախտածին միկրոօրգանիզմների աճից պաշտպանելու եղանակով.

**ներկանյութ՝** սննդային հավելում, որը նախատեսված է սննդամթերքին գույն հաղորդելու, գույնն ուժեղացնելու կամ վերականգնելու համար. սննդային ներկանյութերի շարքին չի դասվում երկրորդային ներկող ազդեցություն ունեցող սննդամթերքը, ինչպես նաեւ սննդամթերքի արտաքին ոչ ուտելի մասերը ներկելու համար (օրինակ՝ պանիրների եւ երշիկեղենի թաղանթները ներկելու համար, միսը

դրոշմակնքելու համար, պանիրները եւ ձվերը մակնշելու համար) կիրառվող ներկանյութերը.

**համալիր սննդային հավելում՝** սննդային հավելման (հավելումների) եւ (կամ) սննդային հումքի եւ (կամ) բուրավետիչի (բուրավետիչների)՝ շրջանառության մեջ դրվելու համար նախատեսված խառնուրդ, որի մեջ համալիր սննդային հավելման բաղադրության մեջ մտնող սննդային հավելումներից առնվազն մեկը վերջնական սննդամթերքում պետք է ֆունկցիոնալ ազդեցություն ունենա.

**առավելագույն թույլատրելի մակարդակ** (առավելագույն մակարդակ, թույլատրելի մակարդակ)՝ սննդամթերքում սննդային հավելման (բուրավետիչի, կենսաբանական ակտիվ նյութի) այն առավելագույն թույլատրելի քանակը սահմանող հիգիենիկ նորմատիվ, որը երաշխավորում է մարդու համար սննդամթերքի անվտանգությունը.

**լցանյութ՝** սննդային հավելում, որը մեծացնում է սննդամթերքի ծավալը՝ առանց էներգետիկ արժեքի էական ավելացման.

**համաբուրավետիչ նյութերի (բուրավետիչների) բնական աղբյուրներ՝** բուրավետիչների (համաբուրավետիչ նյութերի, համաբուրավետիչ պատրաստուկների) արտադրության ժամանակ որպես համաբուրավետիչ հումք օգտագործվող բույսեր (բույսերի մասեր), կենդանական ծագման արտադրանք.

**կրիչ՝** սննդային հավելում, որը նախատեսված է սննդային հավելումների, բուրավետիչների, ֆերմենտային պատրաստուկների, սնուցիչների եւ (կամ) այլ նյութերի լուծման, նոսրացման, դիսպերսման կամ այլ ֆիզիկական ձեւափոխումների համար՝ դրանց օգտագործման արդյունավետությունը մեծացնելու եւ օգտագործումը պարզեցնելու նպատակով, եւ չի ազդում դրանց ֆունկցիաների վրա.

**փրփրամարիչ՝** սննդային հավելում, որը նախատեսված է սննդամթերքում փրփրագոյացումը կանխելու կամ նվազեցնելու համար.

**փրփրարար՝** սննդային հավելում, որը նախատեսված է հեղուկ եւ պինդ սննդամթերքում գազային ֆազի հավասարաչափ բաշխման համար.

**սննդային հավելում՝** առանձին սննդային արժեք ունեցող կամ չունեցող ցանկացած նյութ (կամ նյութերի խառնուրդ), որը սովորաբար չի օգտագործվում անմիջապես սննդի մեջ եւ որը տեխնոլոգիական նպատակով (ֆունկցիայով) կանխամտածված օգտագործվում է սննդամթերքի արտադրության մեջ՝ արտադրության (պատրաստման), փոխադրման (տրանսպորտային փոխադրման) եւ պահպանման գործընթացներն ապահովելու համար, ինչը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել նրան, որ տվյալ նյութը կամ դրա կերպափոխությունների արգասիքները դառնում են սննդամթերքի բաղադրիչներ. սննդային հավելումը կարող է մի քանի տեխնոլոգիական ֆունկցիա կատարել.

**նորահայտ սննդային հավելում, բուրավետիչ, տեխնոլոգիական օժանդակ միջոց՝** նյութեր եւ դրանց խառնուրդները, որոնց նկատմամբ սույն Տեխնիկական կանոնակարգով պահանջներ սահմանված չեն.

**սննդամթերք առանց ավելացված շաքարների՝** սննդամթերք, որը պատրաստված է առանց մոնո- եւ դիսախարիդների կամ դրանք պարունակող սննդամթերքի ավելացման.

**քաղցրացուցիչ՝** սննդային հավելում, որը նախատեսված է սննդամթերքին քաղցր համ հաղորդելու համար կամ օգտագործվում է սեղանի քաղցրացուցիչների բաղադրության մեջ.

**քաղցրացուցիչի նախորդողներ՝** նյութ կամ դրանց խառնուրդը, որը (որոնք) կարող է (կարող են) ստացվել ինչպես սննդամթերքից, այնպես էլ որպես սնունդ անմիջապես չօգտագործվող արտադրանքից, որը պարտադիր չէ, որ ունենա բուրավետիչի հատկություններ եւ որը կանխամտածված ավելացվում է սննդամթերքին՝ սննդի պատրաստման ընթացքում քայքայման կամ այլ բաղադրիչների հետ ռեակցիայի միջոցով համ եւ բույր ստանալու միակ նպատակով.

**համաբուրավետիչ պատրաստուկ՝** համաբուրավետիչ էւ այլ նյութերի խառնուրդ, որոնք ֆիզիկական, ֆերմենտային կամ մանրէաբանական պրոցեսների միջոցով անջատվել են սննդամթերքից կամ սննդային հումքից, այդ թվում՝ սննդամթերքի պատրաստման ավանդական եղանակներով մշակումից հետո. էւ (կամ) որպես սնունդ անմիջապես չօգտագործվող բուսական, կենդանական կամ մանրէային ծագման մթերքներից, որոնք կիրառվում են որպես այդպիսիք կամ մշակվել են սննդամթերքի պատրաստման ավանդական եղանակների կիրառմամբ.

**պրոպելենտ՝** սննդային հավելում-գազ (բացի օդից), որը նախատեսված է տարողությունից (կոնտեյներից) սննդամթերքը դուրս մղելու համար.

**փխրեցուցիչ՝** սննդային հավելում, որը նախատեսված է խմորի ծավալի ավելացման համար՝ գազի առաջացման հաշվին.

**թթվայնության կարգավորիչ՝** սննդային հավելում, որը նախատեսված է սննդամթերքի pH-ի (թթվայնության կամ հիմնայնության) փոփոխման կամ կարգավորման համար.

**կայունացուցիչ՝** սննդային հավելում, որը նախատեսված է երկու էւ ավելի չխառնվող բաղադրամասերի ագրեգատային վիճակի կայունությունն ապահովելու էւ (կամ) դրանց համասեռ դիսպերսիան պահպանելու համար.

**տեխնիկական փաստաթղթերի** համաձայն (այսուհետ՝ ՏՓ-ի համաձայն)՝ սննդային հավելումների, բուրավետիչների էւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների կիրառման՝ արտադրողի կողմից այն դեպքերում սահմանվող կանոնակարգում, երբ սննդամթերքի կիրառման մակարդակները էւ (կամ) սննդամթերքի տեսակները որոշվում են տեխնոլոգիական նպատակահարմարությամբ. ընդ որում, կիրառվող սննդային հավելումների, բուրավետիչների էւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների քանակները չպետք է գերազանցեն տեխնոլոգիական ազդեցություն ապահովելու համար անհրաժեշտ մեծությունները.

**սեղանի քաղցրացուցիչ՝** սննդամթերք (սննդային հավելում (սննդային հավելումներ)), որը պարունակում է թույլատրված քաղցրացուցիչներ՝ այլ սննդային հավելումների (եւ) կամ սննդային բաղադրիչների ավելացմամբ կամ առանց դրանց ավելացման, եւ նախատեսված է սպառողին իրացնելու համար.

**տեխնոլոգիական միջոց** (այսուհետ՝ տեխնոլոգիական օժանդակ միջոց)՝ նյութ կամ նյութեղեն կամ դրանց ածանցյալները (բացառությամբ սարքավորումների, փաթեթավորման նյութերի, արտադրատեսակների եւ սպասքի), որոնք, չլինելով սննդամթերքի բաղադրիչներ՝ կանխամտածված օգտագործվում են պարենային (սննդային) հումքի վերամշակման եւ (կամ) սննդամթերքի արտադրության ժամանակ՝ որոշակի տեխնոլոգիական նպատակների իրականացման համար, եւ դրանց իրագործումից հետո հեռացվում են այդ հումքից, այդ սննդամթերքից, կամ որոնց մնացորդային քանակները պատրաստի սննդամթերքում տեխնոլոգիական ազդեցություն չեն ունենում.

**սննդամթերքի արտադրման ավանդական եղանակներ՝** եփում, այդ թվում՝ գոլրոշու վրա եւ ճնշման տակ (մինչեւ 120 °C), թխում, շոգեխաշում, տապակում, այդ թվում՝ յուղի մեջ (այդ թվում՝ մինչեւ 240 °C՝ մթնոլորտային ճնշման տակ), չորացում, գոլրոշիացում, տաքացում, պաղեցում, սառեցում, թրջում, մացերացիա (թրջոցում), թրմում (եռացում), արտամղում (քամում), զտում, մամլում (մզում), խառնում, էնուլգացում, մանրացում (կտրատում, ջարդում, տրորում, ծեծում), պատիճավորում, կեղեւահանում (կճեպահանում), թորում (բազմաթորում), լուծամզում (ներառյալ լուծիչներով լուծամզումը), ֆերմենտացում եւ մանրէաբանական պրոցեսներ.

**փաթեթավորման գազ՝** սննդային հավելում-գազ (բացի օդից), որը ներմուծվում է տարողության (կոնտեյների) մեջ՝ մինչեւ սննդամթերքը տարողությունում (կոնտեյներում) տեղավորելը, դրա տեղավորման ժամանակ կամ տեղավորումից հետո.

**համի (բույրի) ուժեղացուցիչ՝** սննդային հավելում, որը նախատեսված է սննդամթերքի համի ուժեղացման եւ (կամ) բնական համի եւ (կամ) բույրի ձեւափոխման համար.

**խտարար**՝ սննդային հավելում, որը նախատեսված է մրգերի, բանջարեղենի հյուսվածքների խտության պահպանման եւ սննդամթերքի դոնորղանման կառուցվածքի ամրացման համար.

**գույնի ֆիքսատոր (կայունացուցիչ)**՝ սննդային հավելում, որը նախատեսված է սննդամթերքի գույնի կայունացման, պահպանման (կամ ուժեղացման) համար.

**Ֆերմենտային պատրաստուկներ**՝ որոշակի ֆերմենտներ կամ մթերքների արտադրության ժամանակ ընթացող կենսաքիմիական պրոցեսների իրականացման համար անհրաժեշտ ֆերմենտների համալիր պարունակող՝ բուսական, կենդանական եւ մանրէային (պրոդուցենտ) ծագման մաքրված եւ կոնցենտրացված մթերքներ.

**Ֆլոկուլյանտ (պարզարար, մակակլանիչ)**՝ տեխնոլոգիական օժանդակ միջոց, որը նախատեսված է խառնուկների նստեցման (մակակլանման) պրոցեսների արդյունավետությունը բարձրացնելու համար.

**էմուլգատոր**՝ սննդային հավելում, որը նախատեսված է սննդամթերքում երկու կամ ավելի չխառնվող ֆազերի համասեռ խառնուրդ ստեղծելու եւ (կամ) պահպանելու համար.

**էմուլգացնող աղ**՝ սննդային հավելում, որը նախատեսված է ճարպերի, սպիտակուցների հավասարաչափ բաշխման եւ (կամ) հալած պանիրների եւ դրանց հիմքով մթերքների պլաստիկության բարելավման համար:

## **Հոդված 5. ՇՈՒԿԱՅՈՒՄ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ**

1. Սննդային հավելումները, բուրավետիչները եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցները Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ են դրվում այն դեպքում, եթե դրանք համապատասխանում են սույն Տեխնիկական կանոնակարգին, ինչպես նաեւ Մաքսային միության տեխնիկական այլ կանոնակարգերի, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա:

2. Այն սննդային հավելումները, բուրավետիչները եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցները, որոնց համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին չի հաստատվել, չպետք է մակնշվեն Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով, եւ չի թույլատրվում դրանք շուկայում դնել շրջանառության մեջ :

3. Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ գտնվող սննդային հավելումներին, բուրավետիչներին եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցներին պետք է կցված լինեն դրանց անվտանգությունը հաստատող փաստաթղթերի մասին տեղեկություններ եւ հետազօծելիությունն ապահովող փաստաթղթեր (ապրանքաուղեկից փաստաթղթեր), ինչպես նաեւ արտադրանքի պահպանման պայմանների եւ պիտանիության ժամկետների մասին տեղեկատվություն:

## **Հոդված 6. ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ**

1. Սննդային հավելումների, բուրավետիչների եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների նույնականացումն անցկացվում է «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված կանոններին համապատասխան:

## **Հոդված 7. ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՍՆՆԴԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻՆ, ԲՈՒՐԱՎԵՏԻՉՆԵՐԻՆ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՄԻՋՈՑՆԵՐԻՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

1. Սննդամթերքի արտադրության ժամանակ սննդային հավելումների, բուրավետիչների եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների կիրառման անվտանգության նպատակների համար եւ ձեռք բերողներին (սպառողներին)



մուրրության մեջ գցող գործողությունները կանխելու համար պետք է պահպանվեն հետևյալ պահանջները՝

1) սննդային հավելումների, բուրավետիչների եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների կիրառումը չպետք է մեծացնի սննդամթերքի՝ մարդու առողջության վրա հնարավոր անբարենպաստ ազդեցության ռիսկի աստիճանը.

2) սննդային հավելումների, բուրավետիչներում, համաբուրավետիչ պատրաստուկներում եւ (կամ) բուրավետիչների բնական աղբյուրներում պարունակվող՝ տեխնոլոգիական օժանդակ միջոցների մնացորդային քանակների եւ կենսաբանական ակտիվ նյութերի պարունակությունը պետք է համապատասխանի սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանված՝ դրանցում նորմավորվող նյութերի թույլատրելի պարունակությանը ներկայացվող պահանջներին.

3) սննդային հավելումները, բուրավետիչները եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցները պետք է կիրառվեն միայն այն դեպքերում, երբ առկա է տեխնոլոգիայի կատարելագործման, ինչպես նաեւ սննդամթերքի սպառողական հատկությունների բարելավման, պիտանիության ժամկետների ավելացման անհրաժեշտություն, ինչն այլ եղանակով հնարավոր չէ ապահովել կամ դա տնտեսապես արդարացված չէ.

4) սննդային հավելումների եւ բուրավետիչների կիրառումը չպետք է մուրրության մեջ գցի ձեռք բերողին (սպառողին)՝ սննդամթերքի սպառողական հատկությունների առումով.

5) սննդային հավելումների, բուրավետիչների եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների կիրառումը չպետք է առաջացնի սննդամթերքի զգայորոշման ցուցանիշների վատթարացում.

6) սննդային հավելումները, բուրավետիչները եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցները սննդամթերքի արտադրության ժամանակ պետք է կիրառվեն տեխնոլոգիական ազդեցություն ապահովելու համար անհրաժեշտ նվազագույն քանակով.

7) չի թույլատրվում սննդային հավելումների եւ բուրավետիչների կիրառումը՝ հումքի կամ պատրաստի սննդամթերքի փչացումն ու անորակությունը թաքցնելու եւ (կամ) դրանք կեղծելու, եւ (կամ) դրանք ձեռք բերողներին (սպառողներին) մոլորության մեջ գցելու համար.

8) Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ գտնվող՝ գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների եւ այլ կենսատեխնոլոգիաների կիրառմամբ պատրաստված սննդային հավելումները, բուրավետիչները եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցները պետք է համապատասխանեն «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

2. Սննդային հավելումները, բուրավետիչները եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցները պետք է բաժնեծրարված եւ փաթեթավորված լինեն այնպիսի եղանակով, որը թույլ է տալիս պիտանիության ժամկետի ընթացքում ապահովել դրանց անվտանգությունը եւ մականշվածքում հայտագրված սպառողական հատկությունները՝ պահպանման պայմաններին հետեւելու դեպքում:

3. Սննդային հավելումների, բուրավետիչների եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների փաթեթավորման ժամանակ պետք է կիրառվեն նյութեր, որոնք համապատասխանում են Մաքսային միության՝ սննդամթերքի հետ շփվող նյութերի անվտանգությանը վերաբերող տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

4. Սննդային հավելումների անվտանգության ցուցանիշները (թունավոր տարրերի պարունակությունը եւ մանրէաբանական ցուցանիշները) եւ մաքրության մակարդակը պետք է համապատասխանեն սույն Տեխնիկական կանոնակարգի 28-րդ հավելվածով սահմանված պահանջներին:

5. Սննդային հումք պարունակող համալիր սննդային հավելումների անվտանգության ցուցանիշները, բացառությամբ մանրէաբանական ցուցանիշների, պետք է համապատասխանեն խառը (բազմաբաղադրիչ)

բաղադրությամբ սննդամթերքի համար «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգում, Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակներին վերաբերող տեխնիկական կանոնակարգերում սահմանված պահանջներին:

6. Բուրավետիչների անվտանգության ցուցանիշները եւ դրանց բաղադրությունը պետք է համապատասխանեն սույն Տեխնիկական կանոնակարգի 1-ին եւ 19-րդ հավելվածներում սահմանված պահանջներին:

7. Բուրավետիչների արտադրության ժամանակ որպես հումք թույլատրվում է օգտագործել.

1) համաբուրավետիչ նյութեր՝ սույն Տեխնիկական կանոնակարգի 19-րդ հավելվածի համաձայն.

2) համաբուրավետիչ նյութերի բնական աղբյուրներ եւ (կամ) դրանցից պատրաստված համաբուրավետիչ պատրաստուկներ:

8. Թույլատրվում է շրջանառության մեջ դնելու համար հետեւյալ սննդային բուրավետիչների արտադրությունը.

1) համաբուրավետիչ նյութերից կազմված՝ սույն Տեխնիկական կանոնակարգի 19-րդ հավելվածի համաձայն.

2) համաբուրավետիչ նյութերի բնական աղբյուրներից պատրաստված համաբուրավետիչ պատրաստուկներից կազմված.

3) ապխտման բուրավետիչներ.

4) ջերմային տեխնոլոգիական բուրավետիչներ.

5) բուրավետիչների նախորդողներից կազմված.

6) այլ բուրավետիչներ (որոնց բաղադրության մեջ մտնում են բաղադրիչներ՝ բացառությամբ սույն մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եւ 5-րդ ենթակետերում թվարկված բաղադրիչների).

7) վերոհիշյալ բուրավետիչների խառնուրդներ:

9. Ֆերմենտային պատրաստուկները պետք է համապատասխանեն անվտանգության հետեւյալ պահանջներին՝

1) կապարի պարունակությունը չպետք է գերազանցի 5,0 մգ/կգ-ը.

2) մանրէաբանական ցուցանիշները.

- մեզոֆիլային աէրոբ եւ ֆակուլտատիվ անաէրոբ միկրոօրգանիզմների քանակ (ՄԱՖԱՄՔ), ԳԱՄ/գ, ոչ ավել՝  $5 \times 10^4$  (բուսական, մանրէային (բակտերիալ եւ սնկային) ծագման ֆերմենտային պատրաստուկների համար),  $1 \times 10^4$  (կենդանական ծագման՝ այդ թվում՝ կաթ մակարդող ֆերմենտային պատրաստուկների համար).

- աղիքային ցուպիկների խմբի մանրէներ (ԱՑԽՄ, կոլիձեւեր) 0,1 գրամում՝ չեն թույլատրվում.

- ախտածին միկրոօրգանիզմներ, այդ թվում՝ սալմոնելլաներ, 25 գրամում՝ չեն թույլատրվում.

- E. coli 25 գրամում՝ չեն թույլատրվում.

3) չի թույլատրվում պրոդուցենտների կենսունակ ձեւերի պարունակությունը.

4) մանրէային (բակտերիալ եւ սնկային) ծագման ֆերմենտային պատրաստուկները չպետք է հակաբիոտիկային ակտիվություն ունենան.

5) սնկային ծագման ֆերմենտային պատրաստուկները չպետք է միկոտոքսիններ (ստերիգմատոցիստին, աֆլատոքսին B1, T-2 տոքսին, գեարալենոն, օֆրատոքսին A) պարունակեն:

10. Որպես աղբյուրներ եւ պրոդուցենտներ՝ ֆերմենտային պատրաստուկներ ստանալու համար թույլատրվում է օգտագործել առողջ գյուղատնտեսական կենդանիների, մշակաբույսերի օրգանները եւ հյուսվածքները,

ինչպես նաև մանրէների եւ ցածրակարգ սնկերի, միկրոօրգանիզմների հատուկ ոչ ախտածին եւ ոչ թունածին շտամները՝ սույն Տեխնիկական կանոնակարգի 26-րդ հավելվածի համաձայն:

Ֆերմենտային պատրաստուկների ակտիվության ստանդարտացման եւ կայունության բարձրացման համար թույլատրվում է դրանց բաղադրության մեջ օգտագործել սննդային հավելումներ՝ սույն Տեխնիկական կանոնակարգի 2-րդ հավելվածի համաձայն:

11. Ֆերմենտային պատրաստուկները՝ որպես իմոբիլիզացման նյութեր եւ պինդ կրիչներ արտադրելու համար թույլատրվում է օգտագործել տեխնոլոգիական օժանդակ միջոցներ՝ համաձայն սույն Տեխնիկական կանոնակարգի 27-րդ հավելվածի:

12. Պատրաստի սննդամթերքում որպես տեխնոլոգիական օժանդակ միջոցներ օգտագործված ֆերմենտների ակտիվություն չպետք է հայտնաբերվի:

13. Սննդային հավելումների, բուրավետիչների բաղադրության մեջ կենսաբանական ակտիվ նյութերի եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների չհեռացվող մնացորդների պարունակությունը սննդամթերքում պետք է համապատասխանի սույն Տեխնիկական կանոնակարգի 3-8-րդ, 10-18-րդ, 20-27-րդ, 29-րդ հավելվածներում, «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգում եւ Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակներին վերաբերող տեխնիկական կանոնակարգերում սահմանված պահանջներին:

14. Սննդամթերքում ստացման բոլոր աղբյուրներից սննդային հավելումների գումարային պարունակությունը չպետք է գերազանցի սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանված առավելագույն թույլատրելի մակարդակները:

15. Սննդամթերքում սույն Տեխնիկական կանոնակարգով նորմավորվող սննդային հավելումների պարունակությունը հսկվում է ըստ լցման (ըստ բաղադրագրի) եւ (կամ) հետազոտության վերլուծական մեթոդների կիրառմամբ:

16. Սննդամթերքում սննդային հավելումների պարունակության հիգիենիկ նորմատիվները սահմանված են սույն Տեխնիկական կանոնակարգի 3-18-րդ եւ 29-րդ հավելվածում:

17. Սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանվում են սննդամթերքի առանձին տեսակների արտադրության ժամանակ սննդային հավելումների կիրառման հետեւյալ սահմանափակումները եւ առանձնահատկությունները.

1) սույն Տեխնիկական կանոնակարգի 3-րդ, 6-րդ, 7-րդ (բացի E290 ածխածնի դիօքսիդից), 8-րդ, 12-րդ, 15-րդ, 16-րդ եւ 17-րդ հավելվածներում սահմանված սննդային հավելումները (բացի ներկանյութերից եւ քաղցրացուցիչներից), որոնց կիրառումը կանոնակարգվում է ՏՓ-ի համաձայն, թույլատրվում է օգտագործել սննդամթերքի բոլոր տեսակների համար՝ բացառությամբ

ա) չմշակված սննդամթերքի, մեղրի, գինու, կենդանական ծագման ճարպերի, կովի կաթից կարագի, պաստերացված եւ մանրէազերծված կաթի ու սերուցքի, բնական հանքային ջրերի, սուրճի (բացի լուծվող բուրավետացվածից) եւ սուրճի լուծամզվածքների, չբուրավետացված տերեւավոր թեյի, շաքարների, չոր մակարոնային արտադրատեսակների (բացի սնձան չպարունակողներից եւ սպիտակուցների ցածր պարունակություն ունեցողներից), բնական, չբուրավետացված թանի (բացի մանրէազերծվածից).

բ) սույն Տեխնիկական կանոնակարգի 18-րդ հավելվածին համապատասխան՝ այն սննդամթերքի, որի համար սահմանված են ինչպես ՏՓ-ի համաձայն օգտագործվող սննդային հավելումների ցանկը, այնպես էլ դրանց կիրառման թույլատրելի մակարդակները.

2) ներկանյութերը կարող են կիրառվել. այն սննդամթերքի սկզբնական արտաքին տեսքի պահպանման համար, որի գույնը փոփոխվում է տեխնոլոգիական մշակման, պահպանման, փաթեթավորման եւ այլնի արդյունքում՝ անգույն սննդամթերքին գույն հաղորդելու եւ դրա զգայորոշման

հատկությունները փոփոխելու համար: Սննդամթերքում ներկանյութերի պարունակության առավելագույն մակարդակները սահմանված են սույն Տեխնիկական կանոնակարգի 10-րդ եւ 11-րդ հավելվածներին համապատասխան, ցույց են տալիս ներկանյութերի օգտագործվող առետրային պատրաստուկների հիմնական ներկող նյութի պարունակությունը.

3) չի թույլատրվում ներկանյութեր օգտագործել սույն Տեխնիկական կանոնակարգի 9-րդ հավելվածին համապատասխան սննդամթերքի արտադրության ժամանակ. ներկանյութերը, որոնց կիրառումը կանոնակարգվում է ՏՓ-ի համաձայն, թույլատրվում է օգտագործել սննդամթերքի բոլոր տեսակների համար՝ բացի սույն Տեխնիկական կանոնակարգի 9-րդ եւ 10-րդ հավելվածներում սահմանվածներից.

4) սննդամթերքը ներկելու համար թույլատրվում է ջրում չլուծվող այնպիսի լաքերի օգտագործումը, որոնց մեջ ներկանյութերի պարունակության առավելագույն մակարդակները պետք է համապատասխանեն ներկանյութերի լուծվող ձեւերի համար սահմանված մակարդակներին՝ սույն Տեխնիկական կանոնակարգի 10-րդ եւ 11-րդ հավելվածներին համապատասխան.

5) մսի դրոշմակնքման, ձվերի եւ պանիրների մակնշման համար թույլատրվում են հետտեյալ ներկանյութերը. մեթիլվիոլետ (ըստ ներկանյութերի միջազգային դասակարգման՝ C.I. 42535), ռոդամին C (C.I. 45170), ֆուքսին թթու (C.I. 45685), ինչպես նաեւ սննդային ներկանյութեր՝ սույն Տեխնիկական կանոնակարգի 11-րդ հավելվածին համապատասխան.

6) ձվերը ներկելու համար թույլատրվում է օգտագործել միայն սույն Տեխնիկական կանոնակարգի 11-րդ հավելվածում սահմանված սննդային ներկանյութերը.

7) չի թույլատրվում ալյուրի մշակման համար նյութերի օգտագործումը՝ մանրածախ վաճառքի համար ալյուրի պատրաստման ժամանակ (բացի հատուկ տեսակներից՝ նրբաբլիթների ալյուր, կեքսերի համար ալյուր եւ այլն).

8) չի թույլատրվում կոնսերվանտների օգտագործումը կաթի, սերուցքային կարագի, ալյուրի, հացի (բացի երկարատե պահպանման համար փաթեթավորվածից) արտադրության, սննդամթերքի արտադրության համար միս-հումքի արտադրության ժամանակ.

9) սննդամթերքում ծծմբի դիօքսիդի 10 մգ/կգ(լ)-ից պակաս պարունակությունը (սուլֆիտազերծված հումքի օգտագործման ժամանակ կամ երկրորդական ստացման պատճառով) գնահատվում է որպես պահածոյացնող ազդեցություն չունեցող մնացորդային քանակներ.

10) մսային արտադրատեսակների արտադրության ժամանակ նիտրիտները պետք է կիրառվեն միայն աղադրման-նիտրիտային խառնուրդների (լուծույթների) տեսքով կամ համալիր սննդային հավելումների բաղադրության մեջ.

11) քաղցրացուցիչները պետք է կիրառվեն. ցածր էներգետիկ արժեքով եւ առանց ավելացված շաքարների սննդամթերքում, դիետիկ մթերքներում՝ նախատեսված այն անձանց համար, որոնց խորհուրդ է տրվում սահմանափակել (բացառել) շաքարի օգտագործումը, սահմանված քիմիական բաղադրությամբ մասնագիտացված արտադրանքի մեջ, ինչպես նաեւ սննդամթերքի պահպանման ժամկետի ավելացման նպատակով շաքարի փոխարինման համար:

18. Բուրավետիչների կիրառման դլորտը եւ առավելագույն չափաքանակները սահմանվում են դրանք արտադրողի կողմից տեխնիկական փաստաթղթերում՝ սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանված նորմատիվներին համապատասխան՝ հաշվի առնելով սննդամթերքում սննդային հավելումների եւ կենսաբանական ակտիվ նյութերի թույլատրելի պարունակությունը. սննդամթերքի արտադրության ժամանակ բուրավետիչների չափաքանակները չպետք է գերազանցեն բուրավետիչներն արտադրողի կողմից սահմանված մեծությունները:

19. Սննդամթերքում բուսական հումքից ստացված բուրավետիչներում (համաբուրավետիչ պատրաստուկներում) եւ (կամ) բուսական հումքում պարունակվող կենսաբանական ակտիվ նյութերի պարունակության թույլատրելի



մակարդակները սահմանված են սույն Տեխնիկական կանոնակարգի 20-րդ հավելվածում:

20. Դեղաբույսերը եւ (կամ) դեղաբույսերից ստացված համաբուրավետիչ պատրաստուկները՝ որպես համաբուրավետիչ նյութերի բնական աղբյուր օգտագործելու դեպքում, դրանց պարունակությունը (չոր հումքի կամ դրանցում պարունակվող կենսաբանական ակտիվ նյութի վերահաշվարկով) 1 կգ (լ) սննդամթերքում չպետք է գերազանցի դեղաբանական ազդեցություն ունեցող քանակը:

21. Սննդամթերքի արտադրության ժամանակ չի թույլատրվում որպես համաբուրավետիչ նյութեր հետեւյալ միացությունների օգտագործումը՝ ազարիկաթթու, բետա-ազարոն, ալոին, հիպերիցին, կապսահիցին, կվասսին, կումարին, մենթոֆուրան, մեթիլէվգենոլ (4-ալլիլ-1,2-դիմեթօքսիբենզոլ), պուլեգոն, սաֆրոլ (1-ալլիլ-3,4-մեթիլենդիօքսիբենզոլ), կապտաթթու, տույոն (ալֆա եւ բետա), տեուկրին A, էստրագոլ (1-ալլիլ-4-մեթօքսիբենզոլ):

22. Սննդամթերքի արտադրության մեջ համաբուրավետիչ նյութերի բնական աղբյուրների, ինչպես նաեւ դրանցից պատրաստված համաբուրավետիչ պատրաստուկների եւ բուրավետիչների կիրառումն ունի հետեւյալ սահմանափակումները՝

1) խնկեղեգ եղեգնայինի տետրապլոիդ ձեւը (*Acorus calamus* L., CE 13) չի թույլատրվում սննդամթերքի եւ բուրավետիչների արտադրության մեջ:

2) դառը քվասիան (*Quassia amara* L., CE332) եւ ջամայական քվասիան (*Picrasma excelsa* (Sw.) Planch., CE 2092) թույլատրվում են միայն ոչ ալկոհոլային եւ ալկոհոլային խմիչքների ու հացաբուլկեղենի արտադրության մեջ, կվասսինի պարունակությունը կանոնակարգվում է սույն Տեխնիկական կանոնակարգի 20-րդ հավելվածին համապատասխան:

3) բժշկական տերեւավոր սպունգը (*Fomes officinalis* (Vill.Fr.) Ames կամ *Laricifomes officinalis* (Vill.Fr.) Kotl. Et Pouz., CE2061a, CE359), սրոհունդ խոցվածը

(Hypericum perforatum L., CE 234), լերդախոտ սովորականը (Teucrium chamaedrys L., CE449) թույլատրվում են միայն ալկոհոլային խմիչքների արտադրության ժամանակ: Տեուկրին A-ի պարունակությունը սահմանված է սույն Տեխնիկական կանոնակարգի 20-րդ հավելվածում:

23. Տեխնոլոգիական օժանդակ միջոցների կիրառման հիգիենիկ նորմատիվները սահմանված են սույն Տեխնիկական կանոնակարգի 21-27-րդ հավելվածներում:

24. Սննդամթերքի արտադրության համար որպես տեխնոլոգիական օժանդակ միջոց թույլատրվում է օգտագործել նաեւ սննդային հավելումներ, որոնք թույլատրված են կիրառման համար՝ սույն Տեխնիկական կանոնակարգի 2-րդ հավելվածին համապատասխան:

**Հոդված 8. ՄՆՆԴԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻ, ԲՈՒՐԱՎԵՏԻՉՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ (ՊԱՏՐԱՍՏՄԱՆ), ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՓՈԽԱԴՐՄԱՆ (ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՄԱՆ), ԻՐԱՑՄԱՆ ԵՎ ՕԳՏԱՀԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

1. Սննդային հավելումների, բուրավետիչների եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների արտադրության, պահպանման, իրացման, փոխադրման եւ օգտահանման գործընթացները պետք է համապատասխանեն «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին:

2. Մանրաձախ վաճառքի համար չեն թույլատրվում սույն Տեխնիկական կանոնակարգի 20-րդ հավելվածում նշված կենսաբանական ակտիվ նյութեր պարունակող բուրավետիչները:

3. Մանրաձախ վաճառքի համար թույլատրվում են հետեւյալ սննդային հավելումները՝

1) թթուներ եւ թթվայնության կարգավորիչներ՝ նատրիումի հիդրոկարբոնատ (E500ii, կերակրի սոդա), կիտրոնաթթու (E330), ածխածնի դիօքսիդ (E290).

2) ներկանյութեր, այդ թվում՝ զատիկի ձվերի համար՝ ազոռուբին (E122), անտոցիաններ (E163), դեղին «արեւի մայրամուտ» FCF (E110), դեղին քինոլինային (E104), կանաչ S (E142), ինդիգոկարմին (E132), կարմին (E120), կարոտին եւ դրա ածանցյալները (E160), պոնսո 4R (E124), կապույտ փայլող FCF (E133), կապույտ պատենտավորված V (E131), տարտրազին (E102).

3) քաղցրացուցիչներ՝ ասպարտամ (E951), կալիումի ացետիլֆամ (E950), ասպարտամ-ացետիլֆամի աղ (E962), իզոմալտիտ (E953), քսիլիտ (E967), լակտիտ (E966), մալտիտ (E965), մաննիտ (E421), դիհիդրոֆսալկոն նեոհեսպերիդին (E959), սախարին եւ դրա նատրիումական, կալիումական, կալցիումական աղերը (E950), սորբիտ (E420), ստեվիա եւ ստեվիոզիդ (E960), սուկրալոզա (E955), տաուամատին (E957), ցիկլամաթթու եւ դրա նատրիումական, կալցիումական աղերը (E952), էրիտրիտ (E968):

4. Այլ սննդային հավելումների մանրաձախ վաճառքը (կոնսերվանտներ՝ բենզոյաթթու (E210), նատրիումի բեզուատ (E211), կալիումի բենզուատ (E212), կալցիումի բենզուատ (E213), սորբինաթթու (E200), նատրիումի սորբատ (E201), կալիումի սորբատ (E202), կալցիումի սորբատ (E203). քացախաթթվի 9%-ոց (ոչ ավելի) ջրային լուծույթ (E260). համի եւ բույրի ուժեղացուցիչներ՝ գլուտամինաթթու (E620), նատրիումի գլուտամատ (E621), կալիումի գլուտամատ (E622), կալցիումի գլուտամատ (E629), գուանիլաթթու (E626), նատրիումի գուանիլատ (E627), կալիումի գուանիլատ (E628), կալցիումի գուանիլատ (E629), ինոզինաթթու (E630), նատրիումի ինոզինատ (E631), կալիումի ինոզինատ (E632), կալցիումի ինոզինատ (E633), կալցիումի 5'-ռիբոնուկլեոտիդներ (E634) եւ նատրիումի 5'-ռիբոնուկլեոտիդներ (E635)) կարգավորվում է Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ:

**Հողված 9. ՄՆՆԴԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻ, ԲՈՒՐԱՎԵՏԻՉՆԵՐԻ,  
ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱԿԱՆՇՎԱԾՔԻՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

1. Մննդային հավելումների, բուրավետիչների, տեխնոլոգիական օժանդակ միջոցների, ինչպես նաև սննդային հավելումներ, բուրավետիչներ եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցներ պարունակող սննդամթերքի մականշվածքը պետք է պարունակի «Սննդամթերքի մակնշման մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով նախատեսված տեղեկությունները՝ հաշվի առնելով հետեւյալ լրացուցիչ պահանջները՝

1) սննդային հավելման անվանումը պետք է պարունակի «սննդային հավելում» («համալիր սննդային հավելում») բառերը եւ (կամ) սննդային հավելման (սննդային հավելումների) ֆունկցիոնալ դասը (դասերը) եւ սննդային հավելման (սննդային հավելումների) անվանումը՝ սույն Տեխնիկական կանոնակարգի 2-րդ հավելվածի պահանջներին համապատասխան, եւ (կամ) սննդային հավելման ինդեքսը՝ Համարակալման միջազգային համակարգի (INS) կամ Համարակալման եվրոպական համակարգի (EAN) համաձայն.

2) բուրավետիչի (բուրավետիչների) անվանումը պետք է պարունակի «բուրավետիչ (բուրավետիչներ)» («համաբուրավետիչ նյութ» կամ «համաբուրավետիչ պատրաստուկ» կամ «ապխտման բուրավետիչ» կամ «ջերմային տեխնոլոգիական բուրավետիչ» կամ «բուրավետիչի նախորդող») բառը (բառերը).

3) բուրավետիչի (բուրավետիչների) անվանումը կարող է լրացվել «բնական» բառով, եթե բուրավետիչը պարունակում է միայն համաբուրավետիչ պատրաստուկներ եւ (կամ) բնական համաբուրավետիչ նյութեր՝ բնական ելանյութերից ստացված: Բնական բուրավետիչների ստեղծված անվանումներում այն սննդամթերքի վերաբերյալ նշում օգտագործելը, որի համը եւ (բույրը) ունեն տվյալ բուրավետիչները, թույլատրվում է միայն այն դեպքերում, եթե այդպիսի բնական բուրավետիչները պարունակում են միայն բնական համաբուրավետիչ

նյութեր եւ (կամ) տվյալ սննդամթերքից անջատված բնական համաբուրավետիչ պատրաստուկներ.

4) տեխնոլոգիական օժանդակ միջոցի (տեխնոլոգիական օժանդակ միջոցների) անվանումը պետք է պարունակի «տեխնոլոգիական օժանդակ միջոց» բառերը եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցի (տեխնոլոգիական օժանդակ միջոցների) անվանումը՝ սույն Տեխնիկական կանոնակարգի 21-27-րդ հավելվածների պահանջներին համապատասխան.

5) ֆերմենտային պատրաստուկների մականշվածքը լրացուցիչ պետք է պարունակի ֆերմենտի (ֆերմենտների) ակտիվության տեսակի (տեսակների), միկրոօրգանիզմ-պրոդուցենտի (միկրոօրգանիզմներ-պրոդուցենտների) տեսակի (տեսակների), ծագման աղբյուրի նշում.

6) ֆերմենտային պատրաստուկներ պարունակող սննդամթերքի համար թույլատրվում է չնշել այդ պատրաստուկների ակտիվության տեսակը (տեսակները), այդ պատրաստուկների միկրոօրգանիզմներ-պրոդուցենտների տեսակը (տեսակները).

7) մանրածախ վաճառքի համար չնախատեսված սննդային հավելումների, բուրավետիչների, տեխնոլոգիական օժանդակ միջոցների մականշվածքը պետք է պարունակի «մանրածախ վաճառքի համար չէ» բառերը.

8) սեղանի քաղցրացուցիչների մականշվածքը պետք է պարունակի օրական սպառման անվտանգ բաժնեչափի նշումը.

9) համաբուրավետիչ պատրաստուկներ պարունակող սննդամթերքի համար մականշվածքը պետք է պարունակի պատրաստուկի տեսակի նշումը (լուծամզվածք, թուրմ, եթերայուղ, յուղախեժեր եւ այլն) կամ «բնական բուրավետիչ» բառերը.

10) բուրավետիչ (բուրավետիչներ) պարունակող սննդամթերքի համար թույլատրվում է չնշել համաբուրավետիչ նյութերը եւ (կամ) բուրավետիչի (բուրավետիչների) բաղադրության մեջ մտնող համաբուրավետիչ

պատրաստուկները.

11) թույլատրվում է մականշվածքում չնշել ծծմբի դիօքսիդ կոնսերվանտը՝ սննդամթերքում դրա 10 մգ/կգ (լ)-ից պակաս պարունակության դեպքում՝ ծծմբի դիօքսիդի վերահաշվարկով:

2. Մանրածախ վաճառքի համար չնախատեսված սննդային հավելումների, բուրավետիչների, տեխնոլոգիական օժանդակ միջոցների մականշվածքի միջոցով իրագեկման եղանակները պետք է համապատասխանեն «Սննդամթերքի մականշման մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով տրանսպորտային փաթեթվածքում տեղադրված սննդամթերքի մականշվածքի մասով ներկայացվող պահանջներին:

#### **Հոդված 10. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ (ՀԱՎԱՍՏՈՒՄԸ)**

1. Սննդային հավելումների, բուրավետիչների եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգին ապահովվում է դրա անվտանգության պահանջների եւ «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի եւ Մաքսային միության այն տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարմամբ, որոնց գործողությունը տարածվում է տվյալ արտադրանքի վրա:

2. Հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների մեթոդները սահմանվում են ստանդարտներում՝ համաձայն Ստանդարտների ցանկի, որտեղ ընդգրկված են հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններն ու մեթոդները, այդ թվում՝ նմուշառման կանոնները, որոնք անհրաժեշտ են սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների կիրառման ու կատարման եւ արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման) իրականացման համար:

3. Սննդային հավելումները, բուրավետիչները եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցները ենթակա են համապատասխանության գնահատման (հավաստման)՝ համաձայն «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի:

4. Սննդային հավելումների, բուրավետիչների եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների համապատասխանության գնահատման (հավաստման) ժամանակ լրացուցիչ տրամադրվում են հետեւյալ տեղեկությունները՝

1) համալիր սննդային հավելումների բաղադրության մասին (նորմավորվող սննդային հավելումների բաղադրությունը եւ պարունակության մասին նշումը՝ սույն Տեխնիկական կանոնակարգի 3-8-րդ, 10-18-րդ եւ 29-րդ հավելվածների համաձայն).

2) բուրավետիչների բաղադրության մասին՝ նշելով համաբուրավետիչ նյութերը, համաբուրավետիչ պատրաստուկները, կրիչները, եւ նորմավորվող կենսաբանական ակտիվ նյութերի պարունակության մասին՝ սույն Տեխնիկական կանոնակարգի 20-րդ հավելվածի համաձայն, նորմավորվող սննդային հավելումների պարունակության մասին՝ սույն Տեխնիկական կանոնակարգի 3-8-րդ, 10-18-րդ եւ 29-րդ հավելվածների համաձայն.

3) սննդային հավելումների, բուրավետիչների եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների բաղադրության մեջ գենաձեւափոխված օրգանիզմների եւ ԳՁՕ-ներից ստացված բաղադրիչների օգտագործման մասին.

4) նանոնյութերի եւ նանոտեխնոլոգիաների արդյունքների օգտագործման մասին:

5. Ֆերմենտային պատրաստուկների համապատասխանության գնահատման (հավաստման) ժամանակ լրացուցիչ տրամադրվում են՝

1) պատրաստուկի ծագման աղբյուրի մասին տեղեկությունները եւ դրա բնութագիրը՝ ներառյալ հիմնական եւ լրացուցիչ ակտիվությունը.

2) ֆերմենտի (ֆերմենտների) միկրոորգանիզմ-պրոդուցենտի (միկրոորգանիզմներ-պրոդուցենտների) () շտամի (շտամների) բնութագիրը.

ա) տաքսոնոմիկ դիրքը (շտամի սեռային եւ տեսակային անվանումը, համարը եւ սկզբնական անվանումը. կուլտուրաները հավաքածուներ փոխանցելու եւ ձեւափոխությունների մասին տեղեկությունները).

բ) տեղեկություններ թունածնության եւ ախտածնության մասին (այն սեռերի ներկայացուցիչների շտամների համար, որոնց շրջանում հանդիպում են պայմանական ախտածին միկրոորգանիզմներ).

գ) տեղեկություններ ֆերմենտային պատրաստուկների արտադրության մեջ գենաձեւափոխված միկրոորգանիզմների շտամների օգտագործման մասին:

6. Նորահայտ սննդային հավելումների, բուրավետիչների եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների պետական գրանցման ժամանակ սույն հոդվածի 4-5-րդ մասերով սահմանված տեղեկություններին կից՝ լրացուցիչ ներկայացվում են մարդու առողջության համար նորահայտ արտադրանքի անվտանգությունը հավաստող տեղեկություններ.

1) սննդային հավելումների եւ բուրավետիչների համար՝ նյութի (նյութերի) բնութագիրը, դրա (դրանց) ծագումը եւ քիմիական բանաձեւը (քիմիական բանաձեւերը), բաղադրությունը, ֆիզիկա-քիմիական հատկությունները, ստացման եղանակը, հիմնական նյութի պարունակությունը (մաքրության աստիճանը, խառնուկների առկայությունը եւ պարունակությունը), տեխնոլոգիական ազդեցությանը հասնելու մեխանիզմը եւ սննդային նյութերի հետ փոխներգործության հնարավոր արգասիքները.

2) համաբուրավետիչ նյութերի բնական աղբյուրներից ստացված բուրավետիչների համար՝ աղբյուրի օգտագործվող մասը (մասերը), հիմնական բաղադրիչների, այդ թվում՝ կենսաբանական ակտիվ հիմնական բաղադրիչների բաղադրությունը եւ պարունակությունը, սննդի կամ բուժական նպատակներով օգտագործումը, չափաքանակները.



3) թունաբանական բնութագրերը. առանձին նյութերի համար՝ կենդանու օրգանիզմի մեջ նյութափոխանակությունը.

4) նորահայտ սննդային հավելումների, բուրավետիչների եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների կիրառման տեխնոլոգիական հիմնավորումը, առավելությունները՝ արդեն կիրառվողների հետ համեմատած, այն սննդամթերքի ցանկը, որում առաջարկվում է օգտագործել տեխնոլոգիական ազդեցությանը հասնելու համար անհրաժեշտ չափաքանակները.

5) տեխնիկական փաստաթղթեր, որոնք պարունակում են նորահայտ սննդային հավելման եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների (դրա կերպափոխության արգասիքների) կամ հիմնական բաղադրիչների եւ կենսաբանական ակտիվ նյութերի որոշման մեթոդներ, անվտանգության սահմանված ցուցանիշներ (առկայության դեպքում):

7. Սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման նկատմամբ պետական հսկողությունը (վերահսկողությունը) իրականացվում է Մաքսային միության անդամ պետության ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Հոդված 11. ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՆՇԱՆՈՎ  
ՄԱԿՆՇՈՒՄԸ**

1. Սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանող եւ սույն Տեխնիկական կանոնակարգի 10-րդ հոդվածի համաձայն համապատասխանության գնահատում (հավաստում) անցած սննդային հավելումները, բուրավետիչները եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցները պետք է ունենան Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշում:

2. Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշումն իրականացվում է՝ մինչև սննդային հավելումները, բուրավետիչները եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցները Մաքսային միության անդամ պետությունների շուկայում շրջանառության մեջ դնելը:

3. Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը փաթեթվածքի վրա նշվում է ցանկացած եղանակով, որն ապահովում է հստակ եւ պարզ պատկեր սննդային հավելումների, բուրավետիչների եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների պիտանիության ժամկետի ամբողջ ընթացքում:

## **Հոդված 12. ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՎԵՐԱՊԱՀՈՒՄԸ**

1. Մաքսային միության անդամ պետությունները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցները՝ սույն Տեխնիկական կանոնակարգի անվտանգության պահանջներին չհամապատասխանող սննդային հավելումների, բուրավետիչների եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների՝ Մաքսային միության միասնական մաքսային տարածք շրջանառության մեջ դնելը կանխելու, ինչպես նաեւ դրանք շրջանառությունից հանելու համար:

2. Մաքսային միության անդամ պետության լիազոր մարմինը պարտավոր է Մաքսային միության մյուս անդամ պետությունների լիազոր մարմիններին ծանուցել ընդունված որոշման մասին՝ նշելով տվյալ որոշումն ընդունելու պատճառները եւ տրամադրելով տվյալ միջոցը ձեռնարկելու անհրաժեշտությունը պարզաբանող ապացույցներ:

## Հավելված 1

«Մննդային հավելումների, բուրավետիչների եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» տեխնիկական կանոնակարգի  
(ՄՄ ՏԿ 029/2012)

### Բուրավետիչների անվտանգությանը ներկայացվող պահանջներ

1. Թունավոր տարրերի պարունակությունը բուրավետիչներում չպետք է գերազանցի հետևյալ ցուցանիշները՝

կապար - 5.0 մգ/կգ, կադմիում - 1.0 մգ/կգ,

արսեն - 3.0 մգ/կգ, սնդիկ - 1.0 մգ/կգ,

2. Ծխահարման բուրավետիչները պետք է բավարարեն հետևյալ լրացուցիչ պահանջները՝

1) բենզ(ա)պիրենի պարունակությունը չպետք է գերազանցի 2 մկգ/կգ (I)-ը,

2) բենզ(ա)անտրացենի պարունակությունը չպետք է գերազանցի 20 մկգ/կգ (I) -ը:

3. Ըստ մանրէաբանական ցուցանիշների՝ բուրավետիչները պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին՝

Բուրավետիչների տեսակները	ՄԱՖԱՄՔ, ԳԱՄ/գ, ոչ ավելի	Մթերքի զանգվածը, որում չեն թույլատրվում, գ		Բորբոսներ, ԳԱՄ/գ, ոչ ավելի	Խմորիչներ, ԳԱՄ/գ, ոչ ավելի	Ծանոթագրություններ
		ԱՑԽՄ (կոլիձեւեր)	Ախտածին մանրէներ՝ այդ թվում՝ սալմոնելաներ			
Բուրավետիչներ ջրային հիմքով՝ հեղուկ եւ մածուկանման <sup>1</sup>	5 x 10 <sup>2</sup>	1,0	25	100		բորբոսներ ու խմորիչներ (գումարային)

Բուրավետիչներ չոր՝ շաքարների, բուսախեժերի, աղի եւ այլ մթերքների հիմքով	$5 \times 10^3$	0.1	25	100	100	
Բուրավետիչներ չոր՝ օսլայի եւ համեմունքների հիմքով	$5 \times 10^5$	0.01	25	500	100	Համեմունքների համար՝ սուլֆիտ վերականգնող կլոստրիդիաները չեն թույլատրվում 0,01 գրամում

Ծանոթագրություն.

<sup>1</sup>- բացի էթիլեն սպիրտի կամ պրոպիլենգլիկոլի 15%-ից ավելի պարունակությամբ ջրային լուծույթներից:

## Հավելված 2

«Մանրային հավելումների, բուրավետիչների եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 029/2012)

### Մանրամթերքի արտադրության մեջ կիրառվող թույլատրելի սննդային հավելումների ցանկը

Ինդեքս	Հավելման անվանումը	Հիմնական տեխնոլոգիական գործառույթները
E100	Կուրկումին (CURCUMIN)	ներկանյութ
E101	Ռիբոֆլավիններ (RIBOFLAVINS) <sup>1</sup> i) Ռիբոֆլավին (Riboflavin), ii) Ռիբոֆլավին 5-ֆոսֆատ նատրիումական աղ (Riboflavin 5-phosphate sodium):	ներկանյութ
E102	Տարտրազին (TARTRAZINE)	ներկանյութ
E104	Դեղին քինոլինային (QUINOLINE YELLOW)	ներկանյութ
E110	Դեղին «մայրամուտ» FCF (SUNSET YELLOW FCF)	ներկանյութ
E120	Կարմիններ (CARMINES)	ներկանյութ
E122	Ազոռուբին, Կարմուազին (AZORUBINE)	ներկանյութ
E124	Պոնսո 4R, Մուգ կարմիր 4R (PONCEAU 4R)	ներկանյութ
E129	Կարմիր հմայիչ AC (ALLURA RED AC)	ներկանյութ

E131	Պատենտավորված կապույտ V (PATENT BLUE V)	ներկանյութ
E132	Ինդիգոկարմին (INDIGOTINE)	ներկանյութ
E133	Փայլուն կապույտ FCF, ադամանդյա կապույտ FCF (BRILLIANT BLUE FCF)	ներկանյութ
E140	Քլորոֆիլներ եւ քլորոֆիլիններ (CHLOROPHYLLS AND CHLOROPHYLLINS)  i) Քլորոֆիլներ (Chlorophylls)  ii) Քլորոֆիլիններ (Chlorophyllins)	ներկանյութ
